Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

ԼԿՅԵՄ ՅԵՐՔԱՂԿՈՄԻ ԿԱԶՄ ՀՐԱՄԱՆԳԱԿԱՆ ԲԱԺԻՆ

Արտադրական լկեմ-բջիջների վերակառուցումը

ՅԵՐԵՎԱՆ 1933 Թ.

Ս[illegible]ՊՐԱԳՐԵՑ Հ. ՍԱՌԻԿՅԱՆ

[illegible] Գլավլիտ 8505 (Բ) Տիրաժ 250

ЗКСМ3
Ա

ՔԱՂԱՔԻ ԲՈԼՈՐ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԲՋԻՋՆԵՐԻՆ

ներ, ունենալու են հետևյալ սեկտորները—

Այն արտադրական բջիջները, վորոնք ունեն թվով 25 և 25-ից ավելի կոմյերիտական-

1. Կազմ աշխատանքների սեկտոր
2. Կուլտպրոպ աշխատանքների սեկտոր
3. Արտադրական մասսայական սեկտոր
4. Ռազմֆիզկուլտ աշխատանքների սեկտոր
5. Պիոներ. աշխատանքների սեկտոր

Ինչպե՞ս են աշխատելու վերոհիշյալ սեկտորները և նրանց յենթակա կազմակերպությունները:

I. ԿԱԶՄԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՍԵԿՏՈՐ

Կազմաշխատանքների սեկտորը, վորպես բջիջի աշխատանքների բոլոր բնագավառները կազմակերպող և աշխատանքներն աշխուժացնող սեկտոր, իր շուրջն և համախմբելու բջիջի ակտիվին և նրա միջոցով կազմակերպելու յե կազմ խորհրդակցություններ՝ թույլ ողակներին ուշնելու, նրանց թերությունները հայտարերելու, համապատասխան կազմակերպչական միջոցներ ձեռք առնելու և աշխատանքները

ՀՍՍՀ ... ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ № 2

թարմացնելու ուղղությամբ։ Նա պիտի աշխատի, վորպեսզի բջիջի աշխատանքների բոլոր բնագավառներում կոմյերիտական ուժերը բաշխվեն հավասարապես և յուրաքանչյուր աշխատանքի բնագավառը ղեկավարող կամ կազմակերպող կոմյերիտական տիրապետի իր աշխատանքներին, լրիվ պատկերացում ունենա իր առաջ դրված խնդիրների մասին և իր ցանկությունից բղխի այդ աշխատանքներում աշխատելը, վորպեսզի աշխատանքային նոր յուռանդ ու սեր առաջացնի իր շուրջը համախմբված կոմյերիտականների մեջ։

Նա պիտի աշխատի իր շուրջը համախմբված կոմյերիտականների, կազմակերպիչների, և կոմյերիտական ակտիվի միջոցով հայտարարված աշխատանքների հաջող փորձերի խելացի կերպով կազմակերպել և փոխադրել աշխատանքների տարբեր բնագավառներ, տարբեր սեկտորներ՝ թույլ ողակներին ոգնելու, նրանց աշխատանքները վերակառուցելու ու թարմացնելու նպատակով։ Սրա հետ միասին նա թույլ ողակների աշխատողների և անկազմակերպ, անարդյունավետ աշխատող կոմյերիտականների, սիմուլյանտների, լոդրների, ինչպես և իրենց անպատասխանատու զդացող կոմյերիտականների մեջ սրում և աշխատանքները հաջող կազմակերպելու խնդիրները, նոր փորձեր և անում աշխատանքներում նոր թափ ու յեռանդ առաջացնելու ուղղությամբ. վերոհիշյալների

պատասխանատվության զգացմունքը բարձրացնելու և անպատասխանատվության ու անարդյունավետ աշխատանքների մասին ժամանակին տեղյակ պահելու բջջին, նրա ստորին օղակներին։

Այսպիսի տեսակետից Կազմ սեկտորն ունենալու է՝

1. Թեթեվ հեծելազորի կազմակերպիչ, վորը դարձյալ իր շուրջն և հավաքելու այդ ուղղությամբ աշխատելու ցանկություն ունեցող կոմյերիտականներին և վոչկոմյերիտական յերիտասարդությանը՝ նրանց միջոցով, իր մանակցությամբ և ղեկավարությամբ, հայտարերելու աշխատանքների տարբեր բնագավառների հաջող փորձերն ու թերությունները—սկսած արտադրության բոլոր ցեխերից, բոլորը որյեկտներից, վերջացրած բջիջի անհատ կոմյերիտականներով. նրա կազմահետաքրքրված աշխատանքների դրական և բացասական կողմերն աշխատում է համապատասխան կազմակերպությունների միջոցով և կազմ սեկտորի ղեկավարությամբ հասցնել իր վերջնական արդյունքներին։

2. Անդամավճարների հավաքարար, վորը կազմակերպում է անդամավճարների ճիշտ և ժամանակին հավաքման աշխատանքները, զբաղվում է ինտերնացիոնալ և չեֆական մուծումների կանոնավոր հավաքման աշխատանքներով, բջիջի բյուրոյին տեղյակ է պահում պարտաճանաչ և անպարտաճանաչ

կոմյերիտականների մասին, հայտնաբերում և անդամավճարների, ինչպես և ինտերնացիոնալ ու շեֆ-մուծումների բնագավառում տեղի ունեցած թերությունները և այդ ուղղությամբ ղեկծարարության ու կեղծումների մասին: Հաշիվ է տալիս տվյալ աշխատանքների մասին:

3. Միասնական որերի կազմակերպիչ

Այս կազմակերպիչը նպատակ է դնում միասնական որերը հաջող կազմակերպել և անցկացնել. այս նպատակին հասնելու համար նա աշխատում է, վոր բջիջը և նրա բյուրոն ժամանակին տեղյակ լինեն որվա, ժամի, և որակարգի խնդիրներին, ժամանակին ձեռք բերեն համապատասխան գրականություն, ժուրնալներ, թերթեր, վորտեղից կարելի լինի նյութեր վերցնել՝ այդ որվա ժողովի որակարգի հարցերի առթիվ: Նա աշխատում է, վոր աչքի ընկնող հայտարարություններին, լոզունգների, պլակատների միջոցով լայն մասսայականացվեն որվա որակարգի խնդիրները, վոր լոզունգները, պլակատները, իրենց մեջ արտահայտեն որակարգի խնդիրները, սրանք կոմյերիտականների միտքը դեպի քննվող հարցերը: Կազմակերպիչը պիտի աշխատի, վոր որակարգի խնդիրները հասնեն ցեխերին, բրիգադներին և յուրաքանչյուր կոմյերիտականի, վորպեսզի նրանք ժամանակին ծանոթանան որակարգի հարցերի հետ. վոր այդ խնդիրները շաղկապվեն ցեխերում, բրիգադներում և աշխատանքների ա-

ռանձին բնագավառներում տեղի ունեցող խնդիրների հետ, վոր ցեխի աշխատողներին հրավիրեն խորհրդակցությունների, նրանց միջոցով նախապատրաստեն ընդհանուր ժողովում դնելու և այդ ուղղությամբ կոնկրետ առաջարկություններ անելու։

4. Ինֆորմացիաների հաղորդման կազմակերպիչ

Սա աշխատում է ժամանակին տեղեկություններ տալ բջջի կատարած աշխատանքների, նրա դրական և բացասական կողմերի, ավյալ բջջի տարբեր ղեկավարների, կազմակերպիչների, սեկտորների, ու բջջի կատարած աշխատանքների մասին։ Ինչպես թերությունների, նույնպես և առավելությունների մասին ինֆորմացիաներ է տալիս քաղաքային կոմիտեին, թղթակցություններ և դրում տեղական պատի թերթերին, միությունական մամուլին և այլ թերթերին. ավյալ թերությունների, կամ առավելությունների վրա ստուգված հարցերի ճշտության համար կապվում է բջջի ակտիվին ու համապատասխան ղեկավար կազմակերպիչների, կամ սեկտորի հետ՝ նրանց միջոցով պարզելու հարցի իրական լինելը, վերացնելու թյուրիմացությունները։

Կատարման ստուգող կազմակերպիչ

Սա հետևում է, վորպեսզի բջջի, բյուրոյի և ցեխ-խմբակների հանած վորոշումները կյանքում դրծ դառնան՝ առանց ձգձգումների։ Բա-

ցի դրանից հետևվում է, վորպեսզի բարձրագույն որգանների վորոշումները ժամանակին քննարկվեն բջիջների ողակներում՝ կոնկրետ գործի վերածելու համար։ Այլև աշխատում է ստուգել, թե վորոշումների կենսագործման ուղղությամբ ի՞նչ խախտումներ են տեղի ունեցել և այդ խախտումներն ուղղելու համար ի՞նչ է արել բջիջը։

II. ԿՈՒԼՏՊՐՈՊ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՍԵԿՏՈՐ

Կուլտպրոպ սեկտորը, վորպես բջիջի իդեոլոգիական պայքարի խնդիրները կազմակերպող, կուլտուր-դաստիարակչական և կուլտուր-կենցաղային աշխատանքները տանող, ինչպես և նրանց պայքարի խնդիրները կազմակերպող, բջիջում խոշոր անելիքներ ունի. նա իր շուրջն է համախմբում բջիջի ակտիվին, նրանց միջոցով կազմակերպում է Մարքս-Լենինյան-ստալինյան ուսուցման ու դաստիարակության գործը, հաշվի է առնում բջիջի անդամների քաղաքատրաստականությունը, ըստ նրանց պատրաստականության կազմակերպում և բջիջի քաղուսուցումը, աշխատում է, վորպեսզի քաղուսուցման հարցերի հիմքում դրվեն Մարքս-Լենինյան-ստալինյան դաստիարակության և ուսուցման խնդիրները՝ շաղկապելով այն ներկա պայքարի ակտուալ խնդիրների հետ. կազմակերպում է բջիջի կուլտուր կենցաղային, նրա առողջապահական ու սանիտարական աշխատանքները, հետևվում է, վոր-

պետքի տվյալ ընդհանուր աշխատանքները բավարարեն յուրաքանչյուր կոմերիտականի կոմունիստական դաստիարակության, / աշխատանքների մեջ ներգրավվեն միությունից դուրս գտնված բանվոր երիտասարդության լայն խավերը՝ նրանց իրենց պայքարի ակտիվ խնդիրների մասնակից դարձնելու համար:

Այս սեկտորն ունենալու է հետևյալ կազմակերպիչները՝

1. Քաղուսման կազմակերպիչ, վորը հաշվի առնելով բջջի քաղաքական-տնտեսական դրությունը, նրան տեղեկացնում և համապատասխան քաղխմբակներում և սիստեմատիկ կերպով հեռուստում և քաղաքական-տնտեսական ընթացքին. կազմակերպում և քաղմարտեր, կատարում և փորձերի փոխանակումներ, աշխատում է, վորպեսզի անհատ, կոմերիտական ունկընդրները նախորդ ոգտվեն համապատասխան դրականությունից, նախապատրաստվեն և պատրաստվեն քաղխմբակում դրվելիք հարցերին՝ պասիվ դիրք չբռնելու և ակտիվ մասնակցելու, առաջացնում են ունկնդիրների մեջ յուրանալ՝ դեպի քաղխմբակի աշխատանքները, աշխատում և բարձրացնել խմբակի բովանդակությունը, խրախուսում և որինակելի ունկընդիրներին ու խմբակավարներին և նրանց

շուրջը հասարակական լայն կարծիք է ստեղծում՝ եվ ավելի լավ աշխատելու համար:

2. Մամուլի տարածման կազմակերպիչ, վորը կազմակերպում է մամուլի տարածման գործը, բաժանորդագրություններ և կատարում Մարքսի, Լենինի, Ստալինի հատորների և նրանց գրականությունների համար, աշխատում է յուրաքանչյուր կոմկերիտականի կալել գրականությանը և մամուլին՝ նրանց մասնակից դարձնելով հրատարակվելիք պատի թերթերի աշխատանքներին· կազմակերպում և թղթակցական պրպտեր, ժամանակին կատարում և հաշվառում՝ ո՞վ ինչ թերթ է կարդում, ինչպե՞ս է ոգտագործում ստացած թերթերը, ինչ գրականություն հետ է կապված, ինչպես է ոգտվում գրականությունից ու թերթերից և վերջապես ով ինչպես է հասկանում և ինչ կարծիք է ստեղծվել նրա մեջ այդ խնդիրների շուրջը: Սրում է նրանց ուշադրությունն այդ ուղղությամբ: Այս աշխատանքների մասին պարբերաբար ինֆորմացիաներ է տալիս կուլտպրոպ սեկտորին, նշելով անհատ կոմյերիտականների թերությունները ու հաջողությունները:

3. Սան կենցաղային աշխատանքների կազմակերպիչ, վորն գբաղվում է գործարանի և բոլոր աշխատանքի վայրերի սանիտարական լուսավորության խնդիրների լուսաբանման և

կազմակերպման գործով, հսկում է, վոր աշխատանքի վայրերում, ճաշարաններում, ամբարներում, բակերում և մոտակա փողոցներում, սանիտարական տարրական պահանջները կիրառվեն. հարկ յեղած դեպքում կազմակերպում և կոմյերիտական շարաթոթյակներ՝ մաքրելու բակը, փողոցը, ճաշարանը, և այլն: Հսկում է յուրաքանչյուր կոմյերիտական աշխատակցի սանիտարական մաքրությանը, պրպտվում և կուլտուրական առողջապահական ինդիրներով և այդպիսիների որինակելի աշխատանքները տարածում և ընդլայնում:

Բացի վերոհիշյալից, ամբյուլ սեկտորը զբաղվում և գործադրանի կոմյերիտական և վոչ կոմյերիտական ընկերների կենցաղի ուսումնասիրության հարցերով, թե ինչպես են պայքարում նրանք հին կենցաղի և հին սովորությունների դեմ, ինչպես են նրանք կազմակերպում նոր կենցաղի աշխատանքի ու պայքարի ինդիրները: Նա զբաղվում և նոր կենցաղի հարցերի կազմակերպման ինդիրներով, հետևում և անհատ կոմյերիտականին, թե նա ինչպես և իր ընտանիքում, ինչպես և վերաբերում ընտանիքի անդամների հետ, ինչ կինոներով ու թատրոններով և հետաքրքրվում, ինչ գրքեր և կարդում, ինչ միջավայրում և գտնվում; ինչ խաղերի ու քեֆերի և մասնակցում, կուլտուրա-

ական ինչ խաղեր և կազմակերպում և այդպիսիների նկատմամբ ստեղծում են նոր կենցաղի աշխատանքների կազմակերպման հնարավորություններ:

III. ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՄԱՍՍԱՅԱԿԱՆ ՍԵԿՏՈՐ

Այս սեկտորը կազմակերպում և կոմսոմոլի աշխատանքներն արտադրության մեջ, ծավալում և սոցմրցումն ու հարվածայնությունը, աշխատում է, վոր յուրաքանչյուր կոմյերիտական թափանցի արտադրության խորքերը, ցեխերում կազմակերպում և արտադրության տեխնիկայի տիրապետման խմբակներ, սրում է կոմյերիտական կազմակերպության և անհատ կոմյերիտականի ուշադրությունը՝ տիրապետելու իր աշխատանքի ու մեքենայի տեխնիկային, հասկանալու աշխատանքների պրոցեսները, նրա պարապուրդներ տալու և վատ վորակով ապրանք արտադրելու պատճառները, և այս բոլորից հետո համապատասխան առաջարկություններ են անում այդ բնագավառներում աշխատանքներն առցիոնալ կազմակերպելու համար: Պայքարում է՝ արտադրության մեջ կիրառելու ընկ. Ստալինի 6 ցուցմունքները:

Աշխատում է, վորպեսզի կոմյերիտական և վոչ կոմյերիտական բանվոր յերիտասարդությունը տիրապետի արտադրության տեխնիկային և զարգացնում է նրանց մեջ տեխնի-

կայի տիրապետման անհրաժեշտության հարցերը, կազմակերպում և տեխնիկային տիրապետման խմբակներ, ինչպես որինակ՝ արտադրության տեխնիկայի տիրապետման խմբակ, մեքենաների տիրապետման խմբակ, վորակի բարձրացման խմբակ, ինֆնարժեքի իջեցման, տնտեսաշվարկի նիշտ կազմակերպման, բրակի իջեցման խմբակներ և այլն: Տեխնիկայի տիրապետման նույնանման խմբակներ կազմակերպում են նաև այլ աշխատանքների բնագավառներում, որինակ՝ էլեկտրո—եներգայի խնայողության, էլեկտրոտեխնիկայի տիրապետման, ռազմական տեխնիկայի տիրապետման և այլն:

Խմբակի նպատակ պետք է լինի՝ տիրապետելով տեխնիկային, ռացիոնալ ձևերով կազմակերպել արտադրության պրոցեսները, բարձրացնել արտադրողականության վորակը, պայքարել անտեղի վատնումների ու կորուստների դեմ, կազմակերպել վողջ բանվոր յերիտասարդության ուժ ու յեռանդը՝ բոցավառելով նրանց հաղթանակի խանդավառությունը դեպի սոցիալիստական շինարարության մեծ դործի հաջող կազմակերպումն ու ավարտումը:

Ծավալելով սոցմրցումն ու հարվածայնությունը, աշխատում է, վորպեսզի յուրաքանչյուր բանվոր յերիտասարդ դդա իր վրա վերցրած պարտականությունների խոչոր քա-

ղաքական ու տնտեսական նշանակությունը՝ սոցմրցման պայմանագրերի պարտավորությունների ուղղությամբ, մասսայականացնել այդ պայմանագրերի եյությունը, նոր թափ հաղորդել հետադա աշխատանքների հաջող կազմակերպմանը, ինչպես որինակ հասնող և անցնող բրիգադների հաջող փորձերը փոխանցել այլ բրիգադներ և մնացած ցեխերը, և նրանց փորձերի միջոցով կազմակերպել այնտեղի աշխատանքները՝ · որինակ դարձնելով նրանց համար այս բրիգադի աշխատանքները:

Աշխատում և շեֆական ոգնություն կազմակերպել՝ գյուղական հասարակական և կոմյերիտական կազմակերպություններին, ամրապնդելով գյուղի ու քաղաքի հետազոտման աշխատանքները, ոգնելով նրանց թույլ ողակներին, կատարելով քաղաքի և գյուղի աշխատանքների հաջող փորձերի փոխանակում—քաղաքից–գյուղ և գյուղից–քաղաք:

Այս աշխատանքների հաջող կազմակերպման համար, արտադրական սեկտորն իրեն կից ունենալու յե՝

1· Սոցմրցման ու հարվածայնության աշխատանքներն ստուգող ու հաշվի առնող կազմակերպիչ

Այս կազմակերպիչն աշխատում և զարթեցնել յուրաքանչյուր կոմյերիտականի պարտականությունների կատարման զգաստությունը, սոցմրցման ու հարվածայնության համար ի-

ընդ տված խոստումների, կոնկրետ պարտականությունների կենսագործումը՝—թե ով ե այդ ուղղությամբ մոռացության տվել իր պարտականությունները—արտադրության մեջ, կատարում ե հաշվառման գործը, և աշխատում և հայտարերել նմաններին՝ սեվացնելու և ամոթանք տալու:

Մյուս կողմից, ոգեշրման և հարվածայնության մեջ հայտարերում ե որինակելի հարվածայիններին, վորոնք իրենց անհատական պլանների կատարման գործում միշտ յեղել են առաջավորներ և գրավում են առաջավոր շարքերը. խրախուսում ե նմաններին, աշխատում ե պարզեվատրել նրանց և զանազան գովասանքների միջոցով բարձրացնում ե նրանց հեղինակությունը՝ պլանների կատարման գործում, դարձնելով նրանց մասսաների սիրելի՝ վորպես աշխատանքներով որինակելի կոմյերիտականներ, նրանց որինակ ծառայեցնելով սիմուլյանտների, պրոդուլչիկների և հետ մնացողների համար, վորոնք իրենց պլանները միշտ թերակատարում են:

Հաշվի յե առնում արտադրության առանձին բնագավառներում կոմյերիտականների հայտարերած ինիցիատիվան, կազմակերպում և նրանց ինքնագործունեության աշխատանքները՝ խրախուսելով նրանց իրենց աշխատանքների, հաջող փորձերի հայտարերման ղեկավարության և աշխատանքի ռացիոնալացման ուղղությամբ:

2. Շեֆաշխատանքների կազմակերպիչ

Կապ է հաստատում գյուղի հետ, ուժանդակում է գյուղի կոմյերիտական և հասարակական կազմակերպություններին, ոգնում է նրանց թույլ ողակներին՝ նրանց միջոցով կազմակերպում է գարնանացանի, ինչպես և գյուղական աշխատավորների բոլոր բնագավառներում տարվելիք անելիքների հաջող կազմակերպման և պլանների գերակատարման գործում. ոգնում է ՄՏԿայաններին և գյուղական արհեստանոցներին. գյուղական կազմակերպության միջոցով կատարում է գյուղ. գործիքների հաշվառում, վերանորոգում և այլն:

Կազմակերպում է ամառային գաշտային կուլտուրական, սպասարկման աշխատանքները՝ կատարելով փոքրերի փոխանակում. քաղաքից–գյուղ և գյուղից–քաղաք:

3. Արտադրական խորհրդակցությունների կազմակերպիչ

Հրավիրում է կոմյերիտական ցեխ. խմբակավարների և ցեխ. կազմակերպիչների խորհրդակցություններ. խորհրդակցություններին մասնակից է դարձնում ցեխում աշխատող բանվորական լայն խավերին, աշխատում է խորհրդակցություններ հրավիրել տեղերում, / տեղի աշխատողների կարծիքն ու առաջարկները հաշվի առնել՝ ցեխի պլանների կատարման, նրա թերակատարման գործում, բարձրացնել արտադրության վորակը, պայքարել

անտեղի վատնումների դեմ, պայքարել ինքնարժեքի իջեցման խնդրում, խոտանը պակասեցնելու գործում և այլն, վորից հետո կազմակերպում է կոմյերիտական ուղակների լայն պայքար՝ այդ ուղղությամբ հայտաբերած թերությունները վերացնելու համար: Կազմակերպիչը հետևում է անհատ կոմյերիտականների պլանների ցուցանիշներին, թե ով ինչպես և կատարում իր որվա պլանը և այս բոլորը հանրագումարի բերելով, նույնպես փոխադրում և խորհրդակցությունները՝ թերակատարումների պատճառները պարզելու և կոնկրետ ձեռնարկումներ կազմակերպելու: Մյուս կողմից պլանները կատարող կոմյերիտականներին բուքսիրային կարգով ամրացնում է թերակատարում ունեցող բրիգադներին, ծավալելով աշխատանքի լայն պայքար՝ պլանները կատարելու և գերակատարելու համար:

4. Տեխնիկայի տիրապետման խմբակի կազմակերպիչ

Սա կազմակերպում է տեխնիկայի տիրապետման խմբակի աշխատանքները, բոլոր ցեխերում և աշխատանքների առանձին վայրերում կազմակերպում է խմբակներ, ուղղորդում է տեխնիկական պերսոնալին՝ աշխատանքները հաջող տանելու համար. աշխատում է բոլոր կոմյերիտականներին ընդգրկել տեխնիկայի տիրապետման խմբակում—բացատրելով նրանց տեխնիկայի տիրապետման անհրաժեշ-

ՀՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ
ԳՐԱԴԱՐԱՆ № 2
ԵՐԵՎԱՆ
A 4092
18972

տությունը՝ հետագա մեր աշխատանքների հաջող կազմակերպման և արտադրողականության բարձրացման գործում։

Կատարում է որինակելի խմբակների աշխատանքների ու փորձերի փոխանակումներ՝ ցեխից-ցեխ, բրիգադից-բրիգադ և այլն։

4. Ռազմական սեկտոր

Ռազմական սեկտորը հաշվի է առնում բջջի կոմյերիտականների ռազմական պատրաստականությունը, կազմակերպում է ռազմական ուսուցման գործը, ստեղծում է ռազմական անկյուններ, կազմակերպում է ռազմական տեխնիկայի տիրապետման զանազան խմբակներ, բացատրում է կարմիր բանակի մարտունակության խնդիրները՝ ծանոթացնելով միջազգային ներկա դրության խնդիրների հետ, նրանց տեղյակ պահելով ռազմական գործում տեղի ունեցող նորություններին, կազմակերպում է 1911 և 12 թ. ծնվածների զորակոչիկների նախապատրաստման և պատրաստման աշխատանքները։

Զբաղվում է բջջի անդամների ֆիզկուլտ դաստիարակչության գործով, կազմակերպում է ֆիզկուլտ խմբակներ, սպորտային խաղեր, և ձեռք է բերում ֆիզկուլտ գործիքներ, ստեղծում է այդ ուղղությամբ տարվելիք աշխատանքների համար հնարավոր պայմաններ։

V ՊԻՈՆԵՐԱԿԱՆ ՍԵԿՏՈՐ

Պիոներ սեկտորավարն աշխատում է պիոներական աշխատանքի սեր ունեցող կոմյերիտականներին և պիոներ կոմյերիտականներին համախմբել իր շուրջը, ուժեղ կապ պահել կոլեկտիվի ղեկավար կազմի՝ կոլխորհրդի հետ. ինքը լինելով խորհրդի անդամ, աշխատում է անհրաժեշտ ոժանդակություն և ցուցումներ տալ կոլխորհրդի աշխատանքներին՝ ճիշտ կազմակերպելով պիոներական կոլեկտիվի կոմունիստական դաստիարակության գործը, հարկ եղած դեպքում հրավիրում է խորհրդակցություններ՝ համապատասխան հասարակական կազմակերպությունների և պիոներների ծնողների ուշադրությունը բեվեռելու պիոներների կոմունիստական դաստիարակության, նրա աշխատանքների թարմացման ու աշխուժացման գործում, կազմակերպում և ոժանդակում է լագերի նախապատրաստումը և աշխատում է նրանց հետ չթողնել պիոներական լագերի մասնակցությունից: Կազմակերպում է մանուկների պիոներ-հոկտեմբերիկների ինքնուրույն աշխատանքների խելացի փորձերը՝ փոխանակումներ մի ողակից մյուսը և այդպիսով խրախուսում է նրանց՝ իրենց փորձերի հաջող կազմակերպման համար:

Ծանոթություն.— 1. Արտադրական այն բջիջները, որոնք ունեն 25-ից պակաս կոմյերիտականներ, նրանց համար

բոլոր սեկտորներն անհրաժեշտ չեն։ Իսկ եթե կոմյերիտականների թիվը 25-ի չի հասնում և անհրաժեշտ է ունենալ այդ սեկտորը, այդ դեպքում կարելի է ունենալ և սեկտորը՝ ելնելով գործարանի մեծ լինելուց և աշխատանքների շուրջը վոչ կոմյերիտական բանվոր երիտասարդության շատ լինելուց։

2. Բոլոր հիմնարկային բջիջները նույնանման սեկտորներ և կազմակերպիչներ կազմակերպում են նաև իրենց բջիջներում, համարեցնելով իրենց տեղերի ու աշխատանքների հետ՝ հիմնականում ոգտվելով այս հրահանգից։

Հ.Լ.Կ.ՑԵ.Մ Ցերքաղկոմի քարտուղար՝
(Մ. Խաչատրյան)

Կազմ-բաժվար՝ (Ա. Բարսեղյան)

ՀԱՄԼԿՅԵՄ ԿԵՆՏԿՈՄԻ ՎԱՐՈՒՄՆԵՐԻՑ

ՄԻԱՆԱԿԱՐԳ ՑԵՎ ՊՈԼԻՏԵԽՆԻԿ ԴՊՐՈՑՆԵՐԻ ԼԿՑԵՄ ԲՋԻՋՆԵՐԻ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Ընդհանուր պայմաններ

1. *Կոմյերիտմիության ազդեցությունը դպրոցում ուժեղացնելու և ուսման վարակը բարձրացնելու համար; պոլիտեխնիկ աշխատանքները և աշխատանքային դիսցիպլինան ուժեղացնելու համար վոչ պակաս 3 կոմյերիտական ունեցող դպրոցները կազմակերպում են ԼԿՑԵՄ բջիջներ:*

Ծանոթություն.—*Քառամյա դպրոցներում բջիջներ չեն կազմակերպվում, այլ յեղած կոմյերիտականներն ռայկոմների միջոցով անցնում են տվայլ արտադրության կամ կոլխոզի բջիջները: Դպրոցական բջիջները մտնում են՝ աշխատողներից դասատուները, վարձու աշխատողները և տեխսերատնալի կոմյերիտականները: Բջիջի ղեկավար որդանը հանդիսանում է ընդհանուր ժողովը, վորը հրավիրվում է յերկու ղեկադում մեկ անգամ: Ժողովը քննարկում է քաղաքական հիմնական կամպանիաները, դպրոցաշինարարական խնդ-*

դիրները, լսում և կոմյերիտական կազմակերպությունների հաշվետվությունները և կոլվարի զեկուցումները, դպրոցական կազմակերպությունների հաշվետվությունները, առանձին կոմյերիտականների ուսման առաջադիմությունները, ինչպես նաև ընդունում և հեռացնում և առանձին ընկերների: Աշխատանքները ղեկավարելու համար ընդհանուր ժողովն ընտրում է բջիջի բյուրո՝ 3–5 հոգի (ըստ բջիջի թվի) վեց ամիսը մեկ անգամ: Մինչև 10-ը կոմյերիտական ունեցող բջիջները բյուրոներ չեն ունենում, այլ միայն քարտուղար:

ԲՋԻՋԻ ԲՅՈՒՐՈ

Բյուրոն պայքարը կազմակերպում և հիմնական գիտելիքների, տարրական դիտական դիսցիպլինայի բարձրացման համար և ուժեղացնում և աշխատանքները դպրոցում: Նա ունի հետևյալ սեկտորները—ուսումնական, մասսայական աշխատանքների, սանիտարական—կենցաղային և քաղուսուցման: Բացի բյուրոյի ղեկավար նշանակված անդամներից, մնացած բոլոր կոմյերիտականներն աշխատում են այս կամ այն սեկտորում՝ ըստ ցանկության:

Ծանոթություն.—1 Սեկտորների ղեկավարները կարող են լինել նաև վոչ բյուրոյի անդամներ:

2. Բջիջի բյուրոն լսում և դպրոցի դասա-

տունների ակադեմիկական խմբակների զեկուցումները՝ կոմյերիտականների առաջադիմության մասին, ստուգում և սոցմրցման ընթացքն առանձին խմբակների և առանձին կոմյերիտականների մեջ։ Քննարկում և քաղուստուցման, շեֆական, աշխ. ինքնավարության և այլ աշխատանքները։ Բյուրոն առանձին ուշադրություն պետք և դարձնի և կոնկրետ ոժանդակություն ցույց տա պիոներական կազմակերպության աշխատանքներին։

3. Աշխատանքային ռեժիմը և գիտակցական դիսցիպլինան բարձրացնելու խնդիրները դպրոցական բջիջների հիմնական գործը պետք և հանդիսանան։ Բջիջը լսում և առանձին ընկերների և խմբակային կազմակերպիչների զեկուցումները դիսցիպլինայի մասին, ձեռնարկում և դաստիարակչական միջոցառումներ, հատուկ ուշադրություն և դարձնում մասսայական բացատրական աշխատանքների վրա՝ դպրոցում և ծնողների մեջ. պայքարում և հակապրոլետարական ազդեցություններին, խուլիգանության դեմ։

4. Բջիջի բյուրոն աշխ. ինքնավարության անդամ կոմյերիտականների միջոցով զեկավարում և աշխ. ինքնավարության գործունեությունը դպրոցում։

Ինքնավարության անդամ կոմյերիտականները սիստեմատիկաբար տեղեկացնում են բյուրոյին՝ իրենց աշխատանքների մասին՝

ստանալով կոնկրետ առաջադրություններ՝— բոլոր ընթացիկ կամպանիաները, ուսման հաշվը, սոցմրցումն ու հաշվածայնությունը: Բյուրոն այդ բոլոր աշխատանքները տանում և աշխ. ինքնավարություններին և պիոներ կոլեկտիվների միջոցով: Սերտ կերպով կապվում է դպրոցական խորհրդի հետ:

5. Դպրոցական բջջի քարտուղարը պետք է լինի ակտիվ փորձված կոմյերիական, կոմյերիտմիության աշխատանքների մի տարուց վոչ պակաս ստաժ ունեցող: Ցանկալի է, որ քարտուղարը լինի դպրոցական աշխատողներից, մանկավարժներից, հրահանգիչներից և այլն:

Ծանոթություն.—Բջջի քարտուղարը մտնում է դպրոցական խորհրդի մեջ վճռական ձայնի իրավունքով:

ԲՋԻՋԻ ՍԵԿՏՈՐՆԵՐ

1. Ուսումնական սեկտոր.—Կազմակերպում է ուսումնական աշխատանքները, ստուգում է խմբակի աշխատանքները, սոցմրցման, հաշվածայնության ընթացքը, հետևում է դասացուցակներին և հաշվի է առնում բացակայողներին, կազմակերպում է պայքար պրոգուլների, ուշացումների դեմ և ոժանդակում է դպրոցական աշխորհրդի աշխատանքներին, հայթայթում է ուսումնական գրենական պիտույքներ, ոգնում է թույլ և հետամնաց խմբակներին ու անհատ ուսանողներին:

2. Մասսայական աշխատանքների սեկտոր.—Կազմակերպում և բացատրական աշխատանքները՝ դպրոցում և աշակերտության ծնողների մեջ, ղեկավարում և պատի թերթի աշխատանքները և ուղղությունը:

Ձեռնարկում և թերթերի և մատչելի թարմ գրականության բաժանորդագրության և ընթերցման գործը, ագիտակոլեկտիվների միջոցով պատրաստում և ագիտ կադրեր: Այս կադրերը տանում են բացատրական աշխատանքներ խմբակներում, բացատրում են դպրոցականներին կառավարության, կուսակցության, կոմյերիմիության և լուս-որգանների ձեռնարկումները՝ դպրոցական աշխատանքները լավ կազմակերպելու համար:

Ուղնում և խմբակների կազմակերպիչներին՝ բացահայտել թշնամի դասակարգի տրամադրություններն ուսանողության մեջ, նրանց հակահարված տալ, դպրոցական վողջ մասսան կազմակերպել: Սեկտորը պետք է մտահոգվի բջջի ռազմական Դիսզոդոտոռոմ դրա համար կազմակերպում է Ֆիզկուլտ բնույթ կրող խաղեր, յերգեր, ցուցադրական, յերաժշտական աշխատանքներ, յերեկույթներ, համերգներ, ներկայացումներ և այլն:

Սեկտորը դպրոցում և պիոներ կազմակերպության մեջ ծավալում է հրաձգային, ֆոտո, ռադիո, դրամատիկական յերաժշտական և այլ խմբակներ:

3. Քաղուսուցման սեկտոր.—Կազմակերպում և հետեվում է քաղուսուցման աշխատանքների ընթացքին դպրոցում և կոմյերիտմիության մեջ, հիմնում է քաղ խմբակներ՝ զբաղվելու առարկայական և խմբակային, ընթացիկ քաղաքական կյանքով, կազմակերպում է քաղմարտեր, քաղվիճակախաղեր. ընդգրկում է կոմյերիտականներին՝ այդ աշխատանքների շուրջը համախմբելով ակտիվին, ուժեղացնելով շեֆական աշխատանքները և այլն:

4. Սանկենցաղային սեկտոր.—Ոգնում է դպրոցական վարչության՝ կանոնավորելու դպրոցի ճաշարանի գործը, վերացնելու հերթերը, հսկում է նախաճաշին, կոշիկների և հագուստների բաշխմանը, հետեվում է, վոր դպրոցը մաքուր լինի և այլն:

Պիոներ—կազմակերպության հետ կազմակերպում է պայքար անկարգապահության դեմ և կանոնավորում է դպրոցական հանրակացարանների վիճակը և այլն: Սեկտորը պետք է մտահոգի՝ դպրոցում, տանը տեղի ունեցող կենցաղային հարցերով, պետք է հայտաբերի ուսանողության հետ մնալու պատճառները. սեկտորը սերտ կերպով կապվում է յուրաքանչյուր աշակերտի հետ՝ կազմակերպելով աշակերտության և ծնողներին՝ սանկենցաղային աշխատանքների շուրջը տանելով բացատրական աշխատանքներ, ստեղծում է խորհրդային հասարակական լայն կարծիք. սեկտորը կապ-

մակերպում և փոխադարձ ոգնության գործը դպրոցում։

5. Կոմյերիտական խմբակ.—բարելավելու համար կոմյերիտմիության ղեկավարության գործը դպրոցական աշխատանքներում, ամեն մի դպրոցական խմբակներում, ուր գտնվում են հինգից վոչ պակաս կոմյերիտականներ, հիմնվում են կոմյերիտական խմբակներ։ Խմբակն ընտրվում և խմբակավար լավագույն հարվածային կոմյերիտականներից. խմբակավարներ առաջադրվում են բյուրոյի կազմից։ Կոմյերիտական խմբակը ստուգում և ամեն մի կոմյերիտականի առաջադիմությունը։ Կարգակերպելով ոգնություն հետ մնացողներին, ոգնում և առարկայական խմբակներին, ոժանդակում և սոցմրցման ընթացքին դպրոցում, ոգնում և խմբակավարներին, մանկավարժներին, և ուսկոմներին, բարձրացնում և դպրոցի դիսցիպլինան՝ կարգավորելով հաճախումների գործը, խիստ պայքար և տանում. դասացուցակների խախտման դեմ, ինվենտարի փչացման դեմ։

Խմբակը հատուկ հսկողության տակ և առնում ուսանողների տնային դրավոր աշխատանքները, ձեռնարկում և լավագույն սովորողների և պարտաճանաչների պարգևատրման գործին, խիստ պայքարում և դրավոր աշխատանքները թերադնահատողների և մեկը մյուսից արտագրողների դեմ։

Բյուրոն պարբերաբար խորհրդակցության և հավաքում կոմյերիտական մանկավարժներին և հրահանգիչներին՝ նրանց աշխատանքների հետ կապված խնդիրները քննարկելու. լավագույն փորձերի փոխանակում և կատարում և ընդհանրացնում է նրանց վորակը բարձրացնելու ամենորյա աշխատանքները: Կոմյերիտական որինականության համար աշխատում է ուսուցիչներին կցել տվյալ խմբակներին:

6· Կապը գործարանի կուս ԼԿՑԵՄ և պիոներ կազմակերպությունների հետ.—Կուսդեկավարությունը ԼԿՑԵՄ բջիջն ստանում է այն բջիջից, վորին կցված է, վերջինիս բացակայության դեպքում՝ դպրոցական բջիջից:

Դպրոցական ԼԿՑԵՄ բջիջը գործարանային ԼԿՑԵՄ բջիջի հետ պետք է ունենա սերտ կոնտակտ, համագործակցություն՝ ոգնելով միմյանց աշխատանքներում, ներգրավելով գործարանում դպրոցական ակտիվին, նրանց համախմբելով աշխատանքների շուրջը: Միասնաբար պայքարում է՝ բարելավելու ուսուցչության նյութական, կենցաղային պայմանները, ոգնելու գործարանի դպրոցի կարիքներին և պոլիտեխնիկական սարքավորումը ձեռք բերելու ու կանոնավորելու:

Դպրոցական բջիջը սերտ կապ և պահպանում պիոներական կազմակերպության հետ՝ ոգնելու նրանց կոնկրետ ձեռնարկումներով, կոնկրետ աշխատանքներով, լավագույն կոմ-

յերիտկաններին։ Դպրոցական ԼԿՑԵՄ բջիջը պայքարում է՝ միանձնյա ղեկավարությունը դպրոցում ուժեղացնելու, մանկավարժի դերը բարձրացնելու, նրանց՝ աշխատանքներին ներգրավելու համար, կոնսուլտացիոն աշխատանքներում ոգնելու մեկը մյուսին, լավագույն դաստիարակչական փորձերը փոխադրելու խմբակները, բարձրացնելու դպրոցի աշխատանքների բովանդակությունը և ուսումնական աշխատանքները. անկուսակցական յերիտասարդ մանկավարժներին համախմբում և աշխատանքների մեջ՝ կազմակերպելու դպրոցի վողջ աշխատանքները և այլն։

Բջիջը ձգտում է իր աշխատանքների ընթացքում բարելավել և ընդունել իր շարքերը վորակավոր հասարակական աշխատողներին, պարգևատրված բանվորներին. հատկապես պիոներ կազմակերպության շարքերն ընդգրկելու այդպիսիների յերեխաներին։

Ծանոթություն.— Վերոհիշյալ սեկտորները կարող են կազմակերպվել նաև բոլոր ինստիտուտներում, տեխնիկումներում, բանֆակներում և 7-ամյա դպրոցներում՝ հաշվի առնելով աշխատանքների առանձին պայմանները և առանձին բնագավառները, կապելով այն դպրոցից բըղխող կոնկրետ ակտուալ խնդիրների հետ։ Կոլբյուրոները նույնպես ունենում են այս

սեկտորները՝ դարձյալ նկատի ունենալով իրենց առանձին բնագավառներում տարվելիք աշխատանքները—տվյալ սեկտորի լինելու կամ չլինելու գործում։

Բացի վերոհիշյալ սեկտորից, բոլոր կոլբյուրոները և թե խոշոր բջիջներն ունենալու են նաև ինֆորմացիաների հաղորդման, մամուլի տարածման, կատարման ստուգման և թեթև հեծելազորի կազմակերպիչներ։



ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.
FL0038782

[64]

A I/4092